ԼԻԼԻԱՆ ՀԵԼԼՄԱՆԻ ԴՐԱՄԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅԹՅԱՆ

Լիլիան Հելլմանը XX դարի առաջին կեսի ամերիկյան երևելի դրամատուրգներից է: Մեծ ճգնաժամը Միացյալ Նահանգներում կարևորագույն սոցիալական խթան է Հելլմանի ստեղծագործական գործունեության համար: Նրա ստեղծագործություններն արտացոլում են իր քաղաքական տեսակետները, Ամերիկայի կապիտալիստական համակարգի հանդեպ նրա դժգոհությունը, անհատի կյանքի վրա իշխանության և դրամի քայքայիչ ազդեցությունը, բացահայտում են մարդկության չարության հակվածությունը, անհատական շահերի ու սոցիալական գիտակցության երկատվածությունը:

Բանալի բառեր – Լիլիան Հելլման, ամերիկյան դրամատուրգիա, սոցիալական ու քաղաքական դրամա, սոցիալ-բարոյական ուղղվածություն, Մեծ ճգնաժամ, Համաշխարհային պատերազմ, պիես, հուշագրություն:

XX դարի 1930-60-ական թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում տիրում էին Մեծ ճգնաժամի և Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած վնասներն ու դրանցից բխող հետևանքները՝ քաոս, խորը սոցիալական, տնտեսական, քաղաքական ու մշակութային խնդիրներ, փոփոխություններ ու անկայուն իրադրություններ: Նշվածներն իրենց ուղիղ ազդեցությունն են թողել նշված ժամանակահատվածում ապրող ու ստեղծագործող գրողների, պոետների և դրամատուրգների վրա՝ դառնալով վերջիններիս ստեղծագործության հիմնական թեմաները, և ովքեր ստեղծել են ժամանակի ոգուն համահունչ հասարակական, սոցիալական, քաղաքական ու հոգեբանական գործեր՝ գրականության միջոցով արտացոլելով իրականությունը[1]: Նման պայմաններում ամերիկյան դրամատուրգիան չէր կարող չարձագանքել ստեղծված հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակներին: Այս ժամանակահատվածում երևան եկան մի շարք խորաթափանց ու հուզիչ դրամաներ, որոնք ընդվզում էին Միացյալ Նահանգներում տիրող մթնոլորտի դեմ: Ժամանակաշրջանի դրամատուրգների թվում են Ք. Օդեթսը, Թ. Ուայլդերը, Լ. Հելլմանը, Թ. Ուիլյամսը, Ա. Միլլերը և այլք:

Լիլիան Հելլմանը XX դարի առաջին կեսի ամերիկյան թատերգության երևելի դրամատուրգներից է: Նա գրական ասպարեզ է իջել 1930-ականներին,

---

[1] **Whitfield S. J.** A Companion to 20th-century America. Hoboken, New Jersey, 2004, p. 405, 406.

այնպիսի դարաշրջանում, երբ անհոգ ռոմանտիկ պիեսներն ու հյուրասենյակային կատակերգություններն ավելի լայն հավանության էին արժանանում: Մեծ ճգնաժամն ու Համաշխարհային պատերազմը կարևորագույն սոցիալական խթան են հանդիսացել Հելլմանի ստեղծագործական գործունեության համար:

Աշխարհով մեկ ճամփորդելով որպես Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի ու եվրոպական այլ երկրների մշակութային կցորդ՝ Հելլմանն ականատես է լինում իր գաղափարակիցների հանդեպ ծավալված խարդավանքներին և այդ առումով ձևավորում իր մտորումները[2]: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նա առաջնագծում էր կամ առաջնագծին շատ մոտ: Նա ականատես է լինում ռմբակոծված գյուղերի ու ավերված կյանքերի, զգացմունքային և ֆիզիկական աղետների, որոնք հորդում էին պատերազմի սարսափների միջով:

Հելլմանը մասնակցել է "PEN" կենտրոնի (բանաստեղծներ, դրամատուրգներ, էսսեագիրներ, խմբագիրներ ու վիպասաններ) համաժողովին՝ զանազան մտավորականների հետ քննարկելով ժամանակի հրատապ հիմնահարցերը: Նրա հանդարտությունը միանշանակ չէր, քանի որ խելացի շաղակրատանքն արագորեն վերաճում էր վերամբարձ խառնաշփոթի և հասնում հիպերբոլայի ու հավակնոտ չափերի: Նա տեսնում էր խաբեություններն ու ճշմարիտը և դույզն-ինչ չէր տատանվում՝ արտահայտելու սեփական տեսակետը կամ գրելու այդ մասին[3]:

Սկսած Նոր Օռլեանի հետ կապված աղջկական տարիների հիշողություններից, որոնք կապված էին նրա սիրասուն խնամակալ Սոֆոնիայի հետ, մինչև Նյու Յորք տեղափոխվելը, սկսած անհաջող ամուսնությունից մինչև հոր անհավատարմությունը՝ Լիլիան Հելլմանի կյանքը ցավագին, բայց և իրեն կոփող վայրիվերումների մեջ էր: Հարձակողական ուժով, «դառն» իմաստությամբ ու խորը ներհայեցողության շնորհիվ գրողն իսկապես վերակենդանացնում է անցյալը: Ի վերջո նա ցույց է տալիս բոլորին, որ ինքն «արտոնյալ» կին է, մինչև որևէ մեկը կկարողանար պատկերացնել, թե դա հնարավոր է:

Վերջինիս ստեղծագործությունները բացահայտում են մարդկության չարության հակվածությունը, իշխանության ու դրամի գայթակղությունը, անհատական շահերի ու սոցիալական գիտակցության երկատվածությունը: Հելլ-

---

[2] **Miller Y. J., Frazer L. W.** American drama between the wars: a critical history. Boston, 1997, p. 35.

[3] Նույն տեղում, էջ 49:

մանը գերադասում էր դիմագրավել մարդկությանը բաժին ընկած բարդ իրավիճակները, որը և նրան բերում է ամերիկացի առաջադեմ կին թատերագիր լինելու համբավը:

1930-ականներին լույս են տեսնում Հելլմանի հայտնի պիեսները՝ «Երեխաների ժամը» (1934) և «Փոքրիկ աղվեսները» (1939): Երկուսն էլ թե՛ քննադատության և թե՛ առևտրական տեսակետից հաջողություն են ունենում:

«Երեխաների ժամը» ներկայացվում է Պուլիցերյան մրցանակի, և Հելլմանն ավելի քան երկու տասնամյակ շարունակում է զբաղվել թատերական գործունեությամբ: «Երեխաների ժամը» հիմնված է Վիլյամ Ռոգհեդի «Վատ ընկերակիցներ»-ում մեջբերված բրիտանական դատարանի իրական հայցի վրա. Շոտլանդական՝ աղջիկների ակադեմիայի երկու տնօրինուհիներ ուսանողի կողմից կեղծ զրպարտվում են համասեռամոլության համար[4]: Չնայած պիեսը ներկայացվեց Պուլիցերյան մրցանակի, բայց այն չարժանացավ այդ պատվին, և հետագայում պարզվեց, որ Պուլիցերյան մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամներից մեկը չէր դիտել այդ դրաման, քանի որ թեման համարել էր բարոյական տեսակետից վիրավորական ու անընդունելի:

Հակադրվելով, այսպես կոչված, արվեստագիտական գրաքննությանը՝ Նյու Յորքի առաջատար գրախոսները հիմնեցին Նյու Յորքի քննադատների ակումբի մրցանակաբաշխության հանձնաժողով, որի նպատակը թատերական երկերին իրենց սեփական տարեկան մրցանակի հատկացումն էր: Եվ այսպես, «Երեխաների ժամը» վատ համբավ ձեռք բերեց նաև մյուս քաղաքներում, որտեղ այն բեմադրվեց: Պիեսն արգելվեց Բոստոնում և Չիկագոյում ու կառավարության գրաքննությունից խուսափելու նպատակով միջազգային շրջագայության ժամանակ գաղտնի բեմադրվեց Լոնդոնի մասնավոր թատերական ակումբում[5]:

Հելլմանի նշանակալից մյուս պիեսը՝ «Փոքրիկ աղվեսները», մեկն է չորս դրամաներից, որոնցում հեղինակն ուսումնասիրում է անձնական շահերի և բարոյական պարտականության բախման խնդիրը: Գործողությունները տեղի են ունենում 1900թ. հարավային փոքրիկ քաղաքում և պատկերում են Հուբբարդ հարուստ ընտանիքի անդամների ագահությունն ու եղբայրների մրցակցությունը, երբ նրանց բամբակի արտադրության տեղական գործարանում

---

[4] **Andri E.** The genesis of modern U.S.-American drama: Lillian Hellman, "The children's hour" (1934). Munich, 2012, p. 9.

[5] **Barlow E.J.** Plays by American women 1930-1960. New York-London, 2001, p. 11.

ներդրումներ անելու շնորհիվ առավել հարստանալու հնարավորություն է տրվում. դա մի ձեռնարկում էր, որը վերջնականապես քայքայում է ընտանիքը: Պիեսն իր հզոր բնութագրիչ գծերի, կուռ կառուցվածքի և աշխույժ երկխոսության շնորհիվ լայն համբավ է ձեռք բերել:

Հետաքրքրական են նաև Հելլմանի «Աշնանային պարտեզ» (1951) և «Խաղալիքները տանիքում» (1960) ստեղծագործությունները, որոնցից վերջինը՝ որպես լավագույն պիես, շահել է Նյու Յորքի գրաքննադատների խմբակի մրցանակը: Դրան հաջորդող տարում՝ 1963-ին, նա լույս է ընծայում «Մայրս, հայրս և ես» դրաման, որը Բերթ Բլեչմանի վեպի նմանակումն էր, և հեռանում է թատերական ասպարեզից ու վերսկսում քաղաքական գործունեությունը՝ դառնալով Վիետնամական պատերազմի կայուն հակառակորդը[6]:

Հելլմանի գլխավոր դրամատիկական ստեղծագործություններից «Խաղալիքները տանիքում» պիեսը (1960) բազմաթիվ քննադատներ համարում են նրա լավագույն գործը: «Խաղալիքները տանիքում» պիեսի բովանդակությունը հղացել էր Դաշիել Համմեթը, որն առաջարկում է Հելլմանին գրել պիես մի մարդու մասին, ով միտումնավոր վատնում է իր հարստությունը, երբ հայտնաբերում է, որ ընտանիքը վիրավորված է իր՝ վերջերս ձեռք բերած հարստության առիթով: Հելլմանն ընկալեց Համմեթի գաղափարներն ու այն վերածեց ուշագրավ ոճով կերտված մի պատմության, որը կառուցված է չամուսնացած քույրերի՝ Քարրի և Աննա Բերնիերների ու նրանց եղբոր՝ Ջուլիանի կործանարար հարաբերությունների շուրջ, որն ի հայտ է գալիս, երբ եղբայրն անակնկալ հարստանում է ու ամուսնանում, որը և վտանգում էր քույրերի իշխանությունը եղբոր հանդեպ:

1969-ին Հելլմանը հրատարակում է «Անավարտ կինը», որը հուշագրություն է և հեղինակի առաջին ինքնակենսագրական ստեղծագործությունը: Այն լի է էսքիզներով այնպիսի գրական գործիչների մասին, ինչպիսիք են Էռնեստ Հեմինգուեյն ու Դորոթի Փարքերը, իր սրտակից Դ. Համմեթը և այլք: Հաջորդ՝ «Պենտիմենտո. դիմանկարների գիրք» (1974) հուշագրության մեջ Հելլմանը նմանապես ներկայացնում է իր կյանքի տարբեր ժամանակներում հանդիպած զավեշտալի մարդկանց և իրադարձությունները: Հելլմանի ամենահայտնի էսքիզը հավանաբար «Ջուլիա»-ն է, որը պատմում է մանկության ընկերուհու հետ նրա երկարատև փոխհարաբերության մասին, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ներգրավվել էր Եվրոպայի դիմա-

---

[6] **Bigsby C.W.E**. Modern American drama 1945-2000. Cambridge, 2000, p. 328.

դրության բանակ և սպանվել նացիստական համախոհների կողմից:

Հելլմանի մյուս հուշագրությունը՝ «Սրիկայի ժամանակը» (1976), ժամանակագրական կարգով ներկայացնում է նրա քաղաքական գործունեությունն ու իրադարձությունների մանրակրկիտ հաշվետվությունը, որի արդյունքում նա հայտնվում է ՆՊԱԳԿ-ի առաջ[7]: Այս հատորն առաջացրեց բազում վեճեր, քանի որ Հելլմանը պատկերել էր ժամանակի ազատական գրողների և մտավորականների՝ Լիոնել և Դիանա Տրիլլինգների, Քլիֆորդ Օդեթսի ու Էլիա Քազանի ոչ այնքան դրական դիմանկարները, քանի որ, ըստ իր համոզման, նրանք բոլորը վարկաբեկվել էին, որովհետև վախենալով Կոնգրեսի վրեժխնդրությունից՝ հրաժարվել էին իրենց քաղաքական համոզմունքներից[8]: «Սրիկաների ժամանակը» նաև նախանշեց իր նախորդ ինքնակենսագրական ստեղծագործությունների վերագնահատումը, և հետագայում բազմաթիվ քննադատներ Հելլմանին դատապարտեցին ինքնամեծարման նպատակով փաստերի դիտավորյալ աղավաղման մեջ:

Հելլմանի լիակատար կայացման համար ամենալուրջ վտանգը հայտնվեց 1980-ին, երբ վիպասան և քննադատ Մերի Մըք Քարթին ազգային հեռուստատեսությամբ նրան անվանեց «վատ և անազնիվ գրող»: Այս միջադեպը բորբոքեց Հելլմանի ոչ գեղարվեստական երկերի, մասնավորապես «Ջուլիա»-յի ճշգրտության վերաբերյալ հետագա բանավեճը, և մի քանի գրողներ մանրամասն էսսեներ հրապարակեցին՝ վարկաբեկելով նրա ընկերուհու դիմանկարն ու կարճատև մասնակցությունը Դիմադրության շարժմանը: Հելլմանն այս մեղադրանքներին պատասխանեց՝ Մըք Քարթիի հանդեպ զրպարտության հայց ներկայացնելով, որն անտեսվեց 1984-ին Հելլմանի մահվան պատճառով[9]:

Հելլմանի պիեսները միշտ էլ վերլուծվել են քննադատական տարբեր տեսանկյուններից, հատկապես նրա քաղաքական տեսակետների, անհատի կյանքի վրա իշխանության և դրամի քայքայիչ ազդեցության վերաբերյալ նրա հայացքների և Ամերիկայի կապիտալիստական համակարգի հանդեպ նրա դժգոհության տեսանկյունից: Հելլմանի վաղ շրջանի պիեսների գնահատումը նրան կանգնեցնում է XIX դարի ավանդական դրամատուրգների՝ Անտոն

---

[7] **Hellman L.** An unfinished woman; a memoir. New York, 2001, p. 56.

[8] **Barlow E. J.** Plays by American women: 1930-1960. New York-London, 2001, p. 163.

[9] **Friedman Sh**. Feminism as theme in Twentieth-century American women's drama: Susan Glaspell, Rachel Crothers, Lilian Hellman and Loraine Hansberry (American Studies). New York, 1984, p. 88-89.

Չեխովի և Հենրիկ Իբսենի կողքին, իսկ ուշ շրջանի ստեղծագործությունների գնահատումը նրան առավել հաճախ դասում է այնպիսի ժամանակակից դրամատուրգների շարքում, ինչպիսին են Բերթոլդ Բրեխտը, Յուջին Օ'Նիլը, Արթուր Միլլերը և Թեննեսի Ուիլյամսը: Մեկնաբանները Հելլմանի դրամատիկ գործերն ուսումնասիրել են նաև ֆեմինիզմի համատեքստում՝ վերջինիս ներկայացնելով որպես ֆեմինիստական թատրոնի նախակարապետ: Անկախ իր գործերի հանդեպ քննադատական ուղղվածությունից՝ Հելլմանը շարունակում է պահպանել իր կարևորությունը իբրև XXI դարի ամերիկյան թատրոնի ջատագով:

СОЦИАЛЬНО-МОРАЛЬНАЯ НАПРАВЛЕННОСТЬ ДРАМ ЛИЛИАН ХЕЛЛМАН

ЛУСИНЕ АЙТЯН

Лилиан Хеллман – одна из интереснейших американских драматургов первой половины 20-го века. Великая Депрессия в Соединенных Штатах является самым важным социальным стимулом для творчества Хеллман. Ее произведения отражают ее политические взгляды, недовольство капиталистической системой Америки, разрушительное влияние власти и денег на жизнь личности, выявляют склонность человечества к злости, расхождение личных интересов и общественного сознания.

Ключевые слова – Лилиан Хеллман, американская драматургия, социальная и политическая драма, социально-моральная направленность, Великая депрессия, Мировая война, пьесы, мемуары.

THE SOCIOMORAL FEATURES IN LILIAN HELLMAN'S PLAYS

LUSINE HAYTYAN

Lilian Hellman (1906-1984) is one of the major playwrights of the first half of the 20th century. The most important social incentive for Hellman's creative activities is the USA Great Depression.

Her creations reflect her political views, discontents with the capitalist system of the US, the destructive effects of power and money. Her writings bring up the human tendencies toward malignity and uncover the discrepancy between personal interests and social consciousness.

Key words – Lilian Hellman, American dramaturgy, social and political drama, sociomoral disposition, Great Depression, World War, a play, a memoir.